ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 01

2025 թվականի փետրվարի 12-ի «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» № ՍՊԴ 39-2025 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան *«12» 08 2025թ.*

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ի դեմս նախագահ Հակոբ Աբրահամյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով սպորտի քաղաքականության վարչության 2025 թվականի հուլիսի 06-ի Մ-52514-2025 զեկուցագիրը և 2025 թվականի փետրվարի 12-ի կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» №ՍՊԴ 39-2025 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 9.1-րդ կետը՝ Պայմանագրի Կողմերը համաձայնվեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1 Պայմանագրի Հավելված N1-ի 9-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ սյունակների «պարածանրամարտ» բառը փոխարինել «պարա փաուերլիֆտինգ» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով երկու օրինակից, կնքված է, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011033330
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ.Հակոբյան

Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Ծիծեռնակաբերդի 16
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ՝ 163048113241 ՀՎՀՀ՝ 02522948
Նախագահ

Հ.Աբրահամյան

Կ. Տ.